ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2022/31 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲԻՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/46, 29.03.2022թ.

Գործի ստացման (փոխանցման) ամսաթիվը՝ 05.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/23»

Գնման առարկան՝ լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/23» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք

ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ: